

**2015 ԹՎԱԿԱՆԻՆ ՍՊՈՐՏԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

2015 թվականի ընթացքում պետական աջակցության ծրագրում ընդգրկված 32 մարզական ֆեդերացիաները անցկացրել են 93 Հայաստանի Հանրապետության առաջնություններ, 127 ուսումնամարզական հավաքներ, մասնակցել են 148 Եվրոպայի, աշխարհի առաջնությունների և միջազգային մրցաշարերի:

2015 թվականին ՀՀ հավաքական թիմերի մարզիկները 12 մարզաձևերից (ազատ ոճի ըմբշամարտ, հունա-հռոմեական ըմբշամարտ, թաեքվոնդո, ձյուդո, հրաձգություն, բռնցքամարտ, ծանրամարտ, շախմատ, սամբո, ուշու, մարմնամարզություն, հեծանվային սպորտ) աշխարհի և Եվրոպայի առաջնություններում (մեծահասակներ, երիտասարդներ, պատանիներ) նվաճել են **37 ոսկե, 46 արծաթե և 58 բրոնզե** մեդալ, ընդհանուր հաշվարկով՝ **141 մեդալ**:

Աշխարհի չեմպիոն է դարձել հունա-հռոմեական ըմբշամարտից Արթուր Ալեքսանյանը, Եվրոպայի չեմպիոն են դարձել Տիգրան Մարտիրոսյանը՝ ծանրամարտից, և Տիգրան Կիրակոսյանը՝ սամբո մարզաձևից, Արթուր Թովմասյանը դարձել է մարմնամարզությունից Համաշխարհային ուսանողական խաղերի չեմպիոն:

2015 թվականին Հայաստանի Հանրապետության մարզիկները նվաճել են 2016 թվականի Ռիո դե Ժանեյրոյի օլիմպիական խաղերի **11 ուղեգիր (հունա-հռոմեական ըմբշամարտ-2, ազատ ոճի ըմբշամարտ-1, մարմնամարզություն-1, ծանրամարտ-7)**:

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտը կարգավորող իրավական դաշտի կատարելագործման նպատակով ընդունվել է ՀՀ կառավարության 2015 թվականի նոյեմբերի 5-ի N 1282-Ն որոշումը «Օլիմպիական, պարաօլիմպիկ, սուրդօլիմպիկ խաղերում, օլիմպիական խաղերի ծրագրում ընդգրկված մարզաձևերի (նաև օլիմպիական խաղերի ծրագրում չընդգրկված սամբո ըմբշամարտ, միջազգային շաշկի, ուշու և շախմատ մարզաձևերի) աշխարհի ու Եվրոպայի առաջնություններում (նաև հաշմանդամների), Եվրոպական խաղերում, շախմատի համաշխարհային օլիմպիադայում, Եվրոպայի օլիմպիական երիտասարդական փառատոնում, համաշխարհային ունիվերսիադայում, պատանեկան օլիմպիական խաղերում, շախմատի պատանեկան օլիմպիադայում 1-3-րդ տեղերը գրաված մարզիկներին, ազգային հավաքական թիմերի գլխավոր (ավագ) մարզիչներին, մեդալակիր մարզիկների անձնական մարզիչներին, ազգային հավաքական թիմերի երկրորդ մարզիչներին,

բժիշկներին և մարզիկին պատրաստող մարզական կազմակերպություններին շնորհվող դրամական մրցանակների չափերն ու շնորհման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 29-ի N 462 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»: Նոր ընդունված որոշման մեջ ավելացվել են պատանիների, երիտասարդների աշխարհի ու Եվրոպայի առաջնությունների պարգևատրման գումարները, ավելացվել է պարգևատրումը եվրոպական խաղերի մրցանակակիրների և համաշխարհային ուսանողական խաղերի՝ օլիմպիական խաղերի ծրագրում չընդգրկված մարզաձևերի մրցանակակիրների համար, ավելացվել է հաշմանդամ մարզիկների՝ պատանիների և երիտասարդների Եվրոպայի ու աշխարհի առաջնությունների մրցանակակիրների պարգևատրումը:

Ընդունվել է ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 13-ի N 925-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի գլխավոր և ավագ մարզիչների վարձատրության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, Հայաստանի Հանրապետությունում բնակվող Հայաստանի Հանրապետության և նախկին Խորհրդային Միության հավաքական թիմերի կազմերում՝ օլիմպիական խաղերի ծրագրում ընդգրկված մարզաձևերի, շախմատի և սամբոյի աշխարհի առաջնություններում չեմպիոն դարձած մարզիկների պատվովճարի վճարման կարգը և չափերը հաստատելու մասին»: Որոշման համաձայն վարձատրություն են ստանում ՀՀ հավաքական թիմերի այն մարզիչները, ովքեր մեդալներ են նվաճում Եվրոպայի ու աշխարհի առաջնություններում, Հայաստանի Հանրապետությունը ներկայացնում օլիմպիական խաղերին, և ովքեր անցկացնում են ուսումնամարզական հավաքներ և կենտրոնացված մարզումներ:

Ընդունվել է ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 10-ի N 238-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 4-ի «Հայաստանի Հանրապետության մարզական կոչումների և մարզական կարգերի շնորհման չափորոշիչներն ու կարգը հաստատելու մասին» N 587-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու վերաբերյալ:

Առողջ ապրելակերպի և ակտիվ հանգստի քարոզչության, բնակչության լայն խավերին ֆիզկուլտուրայի և սպորտի պարապմունքներում ներգրավվելու նպատակով Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը Երևանի քաղաքապետարանի հետ համատեղ 2015 թվականի սեպտեմբերի 21-ին՝ Հայաստանի Հանրապետության անկախության տոնի

կապակցությամբ Երևանի Ազատության հրապարակում, Հյուսիսային պողոտայում, Շահումյանի և Մյասնիկյանի արձանների հարակից հրապարակներում կազմակերպել և անցկացրել է մարզական ցուցադրական ելույթներ մի շարք մարզաձևերից: Սեպտեմբերի 21-ին Երևանի կենտրոնով կազմակերպվել է դրոշներով հեծանվավազք:

2015 թվականի փետրվար, մարտ ամիսներին ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզչության և օլիմպիական խաղերի, աշխարհի և Եվրոպայի առաջնությունների չեմպիոնների ու մրցանակակիրների հետ երիտասարդ սերնդին ծանոթացնելու, մեծարելու նպատակով Հայաստանի Հանրապետությունը ներկայացնող անվանի մարզիկները այցելել են հանրակրթական դպրոցներ, հանդիպումներ ունեցել աշակերտների հետ, պատասխանել նրանց հետաքրքրող հարցերին:

2015 թվականի հոկտեմբերի 3-ին Երևանում անցկացվել է միջազգային կիսամարաթոնյան վազք: Այն անցկացվել է 4 տարբեր տարածություններով՝ 2,5 կմ, 5 կմ, 2 x 10,5 կմ (փոխանցավազք՝ էստաֆետ) և 21 կմ, որին մասնակցել են 19 երկրների ավելի քան 4717 տարբեր տարիքի վազողներ: Տղամարդկանց 21 կմ վազքատարածքում հաղթող է դարձել Ռուսաստանի Դաշնությունը ներկայացնող Սերգեյ Լուկինը, երկրորդ տեղն է գրավել Ռումինիան ներկայացնող Քրիստիան Ստոյակը, իսկ երրորդը՝ Արաբո Հազարյանը Իրանի Իսլամական Հանրապետությունից: Կանանց 21 կմ վազքատարածքում հաղթող դարձավ Ռուսաստանի Դաշնությունը ներկայացնող Իրինա Սերգենևան, երկրորդ տեղը գրավեց Կատերինա Կարմենենկոն Ուկրաինայից, իսկ երրորդը՝ Ռումինիան ներկայացնող Անդրե Փիսկան: Հայաստանի Հանրապետությունը ներկայացնող մարզիկները (տղամարդիկ և կանայք) հաղթող են դարձել փոխանցավազքում՝ 5 կմ և 2,5 կմ վազքատարածություններում: Կիսամարաթոնի հաղթողները և մրցանակակիրները պարգևատրվել են մեդալներով, գավաթներով և դրամական պարգևներով, բոլոր մասնակիցներին հանձնվել են մեդալներ:

2015 թվականի ամառային զորակոչին 31 մարզիկ զորակոչվել է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Բանակի կենտրոնական մարզական ակումբ՝ մարզական վարպետությունը բարձրացնելու և Եվրոպայի ու աշխարհի առաջնություններին և միջազգային մրցաշարերի մասնակցելու նպատակով:

2015 թվականի ձմեռային զորակոչին Բանակի կենտրոնական ակումբ զորակոչվելու համար հանձնաժողովի քննարկմանն է ներկայացվել բարձր արդյունքներ ունեցող 14 մարզիկի թեկնածություն:

2015 թվականին Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացրել «Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու մասին» 28 որոշման նախագիծ և «Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ազատելու մասին» 6 որոշման նախագիծ:

2015 թվականին Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը սպորտի բնագավառում մեծ ներդրում ունենալու համար նախարարության ոսկե մեդալով պարգևատրել է 11 անձի, 16 անձի շնորհվել է «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պատվավոր աշխատող» պատվավոր կոչումը: Հայաստանի Հանրապետության միջազգային կարգի սպորտի վարպետի կոչում շնորհվել է 15 մարզիկի, իսկ 59 մարզիկի՝ Հայաստանի Հանրապետության սպորտի վարպետի կոչում:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն է ներկայացվել «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման 2013-2017 թվականների ծրագիրը՝ 2015 թվականին նախատեսված միջոցառումների իրականացման մասով: